

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷԶԸ



2021 թվականը շրջադարձային եղավ ՀՀ ԳԱԱ պատմության համար. հունիսի 28-ին ընտրությունների շնորհիվ մեր երկրի գիտական հիմնական հաստատության հինգերորդ նախագահ ընտրվեց ակադեմիկոս **Աշոտ Սաղյանը**: Ապագա գիտնականը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1980-1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում: Ա. Սաղյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1997 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2016 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Նրա գիտական գործունեության բնագավառներն են ստերեոսելեկտիվ կատալիզը, ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը, բնական և կենսասինթետիկ խառնուրդներից կենսաակտիվ միացությունների անջատումը և մաքրումը: Ա. Սաղյանը հեղինակ է շուրջ 350 գիտական հոդվածների, 2 դասագրքի, 2 մենագրության: Նա 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է: Ա. Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի (2001), պարգևատրվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով (2002) և ՀՀ վարչապետի հուշամեդալով (2009): Աշոտ Սաղյանը ՀՀ պետական մրցանակի դափնեկիր

է (2015), ՀՀ նախագահի մրցանակի կրկնակի դափնեկիր (2004, 2011): 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ընտրվեց **Հրանտ Հենրիկի Մաթևոսյանը**: Հ. Մաթևոսյանը ծնվել է 1947 թ. հուլիսի 10-ին Երևանում: 1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. նա ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 1997 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Հ. Մաթևոսյանը 2011-2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար: Նա ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» տնօրենն է, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչը: 2018 թ. Հրանտ Մաթևոսյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց **Արթուր Միքայելի Իշխանյանը**: Ա. Իշխանյանը ծնվել է 1960 թ. մայիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 1983-1986 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 2004 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Արթուր Իշխանյանի գիտական գործունեության հիմնական բնագավառներն են ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկան, մակերևույթային ֆիզիկան, քվանտային սակավավիճակ համակարգերը և այլն: Գիտնականը ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր է (2015):

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանի առաջարկությամբ ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը** դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս **Յուրի Շուքուրյանը**՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը** ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1958 թ.' ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում: Իր գիտական աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԳԱ Բյուրականի աստղադիտարանում, ապա Աշտարակում՝ ՀԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի նորաստեղծ ինստիտուտում: 1960-1964 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պ. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում:

Ռ. Մարտիրոսյանը 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, վերադարձել Աշտարակ՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ, ղեկավարել նորաստեղծ՝ քվանտային ուժեղացուցիչների լաբորատորիան: 1980 թ. նա նշանակվում է նույն ինստիտուտի տնօրեն:

1980 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը: 1984-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1986 թ. ընտրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ ակադեմիկոս:

1993-2006 թթ. Երևանի պետական համալսարանի ռեկտորն էր: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ, այն ղեկավարել մինչև 2021 թ.:

Գիտնականը արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարական բարձր պարգևների, նրան շնորհվել են բազմաթիվ մեդալներ ու շքանշաններ:

Նշենք նաև, որ այս տարի լրանում է բազմալստակ գիտնականի ծննդյան 85-ամյակը, մաղթենք, որ նա ունենա ամուր առողջություն և նոր ավանդ հայրենական գիտության զարգացման մեջ:

Հունիսի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցան նաև ԳԱԱ նախագահության անդամների և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների ընտրությունները: ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ **Ռադիկ Մարտիրոսյանը, Աշոտ Մելքոնյանը, Գեղամ Գևորգյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Արսեն Հախումյանը, Վազգեն Մելիքյանը:** ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լենսեր Աղալովյանը:** ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռադիկ Կոստանյանը:** ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ռուբեն Հարությունյանը:** ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լևոն Թավադյանը:**



ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը:** Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. հունիսի 25-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1965 թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը: 1970 թ. ստացել է տնտեսագիտության թեկնա-

ծուի, 1983 թ.' դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.' ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2011 թ.' ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների, այդ թվում՝ շուրջ 50 մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, որոնք վերաբերում են տնտեսագիտության ամենատարբեր բնագավառների: Յու. Սուվարյանը ավելի քան 70 թեկնածուական և 8 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է: Նրա բազմաթիվ պարգևների մեջ հատկապես հիշարժան են «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին (2011) և 2-րդ (2017) աստիճանի շքանշանները: 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Մեր երկրի համար ճակատագրական այս օրերին աննկուն կամք և ուժ է պահանջվելու ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահից և մեր գիտական վերնախավից՝ պատմության հերթական մարտահրավերներին դիմակայելու համար: Համոզված ենք, որ գիտությունը ոչ միայն լույս է սփռելու մեր հայրենիքում, այլև էապես պաշտպանելու է նրան: Այս առաքելության իրականացման գործում մեր գիտական առաջին այրերին սրտանց մաղթում ենք անսպառ եռանդ և նորանոր հաջողություններ: